ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

08 հունվար, 2026 թվականի № 2-Ա

ԱՆՆԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ-ԾՐԱԳՐԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1947-Ա որոշումը, ինչպես նաև «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի կողմից 2026 թվականի հունվարի 5-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված հ/հ 02/26 գրությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որոշում է կայացվել լուծարել Ընկերությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության գործադիր տնօրենի տեղակալ-ծրագրերի տնօրեն Աննա Սարգսյանին 2026 թվականի փետրվարի 26-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ միաժամանակ դադարեցնելով նաև վերջինիս ժամանակավորապես վերապահված՝ Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունները:
2. Հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Աննա Սարգսյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծումը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

08 հունվար, 2026 թվական
ք. Երևան